Հ ա ս տ ա տ վ ա ծ է՝
Երևանի Վ. Բրյուսովի անվան
պետական լեզվաբանական համալսարանի ռեկտորի
_____ հրամանով
_____ Ս. Զոլյան

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԿԱՐԳ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ամբիոնների վարիչների ընտրության կարգի հիմնադրույթներին համապատասխան դասալսումների անցկացման և քննարկման կազմակերպման Կարգը:

2. Ամբիոնի վարիչի պարտադիր պարտականությունների մեջ է մտնում ամբիոնի դասախոսների դասալսումները և դրանց քննարկման կազմակերպումը:

II ԱՄԲԻՈՆԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ամբոնի վարիչը կատարում է ամբիոնի դասախոսների դասալսումներ ըստ ամբիոնի նիստում հաստատված ժամանակացույցի:

2. Յուրաքանչյուր դասալսում ամբիոնի վարիչի կողմից կատարված եզրակացությամբ, դիտողություններով և առաջարկներով գրանցվում է համապատասխան մատյանում:

3. Ամբիոնի դասախոսների դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստերի ժամանակ:

4. Քննարկման արդյունքները համապատասխանաբար արձանագրվում են և գնահատվում են դասախոսի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպչական, «ուսանող-դասախոս» հարաբերությունների ձևավորման ունակությունները, դասը կազմակերպելու և վարելու ժամանակակից մեթոդների կիրառումը և այլն:

5. Ամբիոնների դասախոսների դասալսումների քննարկման և գնահատման արդյունքները հաշվի են առնվում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մրցույթի կազմակերպման, նաև պայմանագրի կնքման ժամանակ:

III ԱՄԲԻՈՆԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

1. Ամբիոնների հաստատված գործավարության պարտադիր ցանկում ընդգրկել համապատասխան ֆակուլտետի կողմից կնքված և էջակալված «Դասալսումների գրանցման մատյան»:

2. Ամբիոնի նիստերում դասալսումների քննարկման արձանագրված արդյունքները և որոշումները ներկայացվում են ֆակուլտետի խորհրդի մրցութային հանձնաժողովին:

Հաստատված է համալսարանի ռեկտորատի 30.06.06թ. հ.30 նիստում